Կառավարություն

ՆՈՅԵՄԲԵՐ 25 - ԴԵԿՏԵՄԲԵՐ 5 2014 Թ. ԹԻՎ 31 (2052)

ՏԱՄՆՕՐՅԱ ԹԵՐԹ ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է 1951 Թ. ԳԻՆԸ՝ 120 ԴՐԱՄ

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ

«ԱՐՄԵՆԻԱ ՎԱՅՆԸ» ՀՅՈՒՐԸՆԿԱԼԵԼ Է ՀՀ ՆԱԽԱԳԱՀԻՆ

ՀՀ նախագահը մեկնել է Արագածոտնի մարզ, որտեղ այցելել է Սասունիկ համայնքում գտնվող «Արմենիա վայն» ընկերության գործարան:

Սերժ Սարգսյանը շրջայց է կատարել գործարանի արտադրամասերում, ծանոթացել ընկերության արտադրական հզորություններին, իրականացված նոր ներդրումներին, գործարանի ձեռքբերումներին և զարգացման հետագա ծրագրերին: Շրջայցի ընթացքում հանրապետության ղեկավարին ներկայացրել են, որ ընկերությունը 2008-2011թթ., գինու, կոնյակի և օղու արտադրություն կազմակերպելու նպատակով, կատարել է շուրջ 9.5 մլն եվրոյին համարժեք դրամի ներդրումներ, որոնք ուղղվել են խաղողի ընդունման կետի, գինու առաջին արտադրամասի, սպիրտի պահոցի, օղու կուպաժի և շշալցման արտադրամասերի հիմնմանը, տեխնոլոգիական սարքավորումների ձեռքբերմանը: 2012-2014թթ. ընկերությունը շարունակել է խոշորածավալ ներդրումներ կատարել գինու և կոնյակի արտադրության ոլորտներում: Շամպայն գինիների արտադրության կազմակերպման նպատակով, ևս կատարվել է 5.617 մլրդ դրամի ներդրում:

Կառուցվել և շահագործման են հանձնվել գինու պահոցը, գինու և կոնյակի հնեցման մառանը, կոնյակի համար խաղողի ընդունման նոր մեքենայատունը և կոնյակի վինիֆիկացիայի արտադրամասը, նոր պահեստը, վարչական մասնաշենքը, նոր լաբորատորիան և տեխսպասարկման կենտրոնը: Ընդլայնվել է նաև կոնյակի սպիրտի թորման արտադրամասը: Գործարանի արտադրամասերը հագեցվել են գինեգործական ժամանակակից տեխնոլոգիական սարքավորումներով, որոնք ներկրվել են՝ Ֆրանսիայից, Իտալիայից, Գերմանիայից և Բելգիայից:

Ընկերությունը Հայաստանի գինեմետ խաղողի սորտերի խոշոր մթերող կազմակերպություններից է: Այսօր այն ունի 200 աշխատակից, որոնց միջին աշխատավարձը կազմում է շուրջ 160.0 հազ. դրամ: Ներկայումս ընկերությունն արտադրում է օղի և գինի:

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ

ՊԱՏՐԱՍՏԱԿԱՄՈՒԹՅՈՒՆ՝ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանն ընդունել է ՀՀ-ում Ֆրանսիայի նորանշանակ արտակարգ և լիազոր դեսպան Ժան-Ֆրանսուա Շարպանտիեին: Շնորհավորելով հյուրին՝ մեր երկրում դիվանագիտական առաքելություն ստանձնելու կապակցությամբ, նախարարը համոզմունք հայտնեց, որ նրա պաշտոնավարման ընթացքում հայ-ֆրանսիական հարաբերությունները նոր լիցք կստանան:

Անդրադառնալով ընթացիկ տարում իր ֆրանսիացի գործընկերոջ հետ հանդիպման ընթացքում ձեռք բերված պայմանավորվածություններին՝ նախարարը գոհունակությամբ նշել է, որ դրանց շրջանակում նախատեսված ծրագրերը բարեհաջող են ընթանում: Այնուհետև նախարար Սերգո Կարապետյանը հակիրճ ներկայացրել է Հայաստանի գյուղատնտեսության բնագավառում վերջին տարիների ձեռքբերումները՝ միաժամանակ նշելով լուծումներ պահանջող հիմնահարցերը, մասնավորապես՝ տեղական արտադրանքի ինքնաբավության մակարդակի բարձրացման, գյուղացիական միությունների և կոոպերատիվների ձևավորման, վերամշակող արդյունաբերության արդիականացման և բնական աղետների դեմ առավել արդյունավետ պայքարի միջոցների ներդրման անհրաժեշտությունը:

Դեսպանն, իր հերթին, նշել է, որ գյուղատնտեսությունն այն բնագավառն է, որտեղ՝ երկկողմ համագործակցության տեսանկյունից, պետական մակարդակով և մասնավոր հատվածում գրանցվել են զգալի հաջողություններ: Դեսպանը հաստատել է, որ ֆրանսիական կողմը պատրաստակամ է շարունակել աջակցությունը Հայաստանին՝ գյուղատնտեսական ծրագրերի իրականացման հարցում: Այդ կապակցությամբ նա նաև տեղեկացրել է, որ 2015 թվականին նախատեսվում է խաղողագործության և գինեգործության բնագավառի ֆրանսիացի փորձագետների այցը Հայաստան՝ համագործակցությունն ավելի ընդլայնելու նպատակով:

Հաշվի առնելով առկա ներուժը՝ կողմերը մեկ անգամ ևս հաստատել են, որ գյուղատնտեսության բնագավառը՝ համագործակցության տեսանկյունից, երկու երկրների համար գրավիչ է, ուստի անհրաժեշտ են երկկողմ ջանքեր՝ այն առավել ակտիվացնելու համար: Հանդիպման ավարտին՝ ՀՀ գյուղատնտեսության նախարարը խնդրել է դեսպանին՝ իր ֆրանսիացի գործընկերոջը փոխանցել 2015 թվականին Հայաստան այցելելու հրավերը:

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Կառավարությունում, ՀՀ վարչապետ Հովիկ Աբրահամյանի գլխավորությամբ, տեղի է ունեցել խորհրդակցություն, որին մասնակցել են հանրապետության բոլոր մարզերի մարզպետները:

Խորհրդակցության ընթացքում քննարկվել են մարզերում տարբեր բնագավառներում իրականացված աշխատանքներն ու ծրագրերը, դրանց արդյունքներն ու ընթացիկ խնդիրները: Մասնավորապես, մարզպետները զեկուցել են ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված աշխատանքների, կառավարության կողմից իրականացվող ծրագրերի, մարզային համայնքների սեփական եկամուտների հավաքագրման ընթացքի մասին:

Խորհրդակցության ընթացքում անդրադարձ է կատարվել նաև հողօգտագործողներին տրամադրված սերմացուի, մատչելի գնով պարարտանյութի և դիզելային վառելիքի պետական ծրագրին: Մարզպետներն ընդգծել են ծրագրի արդյունավետությունը և նշել, որ այն էապես նպաստել է գյուղատնտեսության զարգացմանը, արձանագրվել են տարբեր գյուղմթերքների արտադրության ծավալների աճ: Միաժամանակ նշվել է, որ ծրագիրն ունի սոցիալական ուղղվածություն, քանի որ գյուղացիական տնտեսությունները հնարավորություն են ունենում մատչելի գնով ձեռք բերել պարարտանյութ և դիզվառելիք, ստանալ բարձրորակ սերմացու: Այդ համատեքստում, խորհրդակցության մասնակիցները կարևորել են ծրագրի շարունակականությունը: Վարչապետը՝ հաշվի առնելով ծրագրի իրականացման ընթացքում արձանագրված որոշ թերություններ, հանձնարարել է ներկայացնել համապատասխան առաջարկություններ՝ ծրագիրը հետագայում առավելագույնս համակարգված կազմակերպելու համար: Քննարկվել են նաև մարզպետարանների գործունեության արդյունավետության բարձրացմանն առնչվող այլ հարցեր:

ԵՐԿԿՈՂՄ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ

ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանն ընդունել է ՀՀ-ում Արգենտինայի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Դիեգո Ալվարես Ռիվերային, որն ուղեկցում էր Արգենտինայի գյուղատնտեսության նախարարության պատվիրակությանը:

Հանդիպման նպատակն էր՝ քննարկել գյուղատնտեսության բնագավառում երկկողմ համագործակցության հետագա զարգացման հեռանկարները, որոնց հիմնական ուղղություններն արդեն նախանշված էին 2011 թվականին երկու երկրների միջև համագործակցության մասին համաձայնագրում:

Նախարար Սերգո Կարապետյանը, անդրադառնալով հայ-արգենտինյան բարեկամական հարաբերություններին, հատկապես կարևորեց գյուղատնտեսության բնագավառում այն ընդլայնելու անհրաժեշտությունը: «Հայաստանն ու Արգենտինան ունեն համագործակցության մեծ ներուժ, հատկապես՝ գյուղատնտեսության բնագավառում, քանի որ Արգենտինայի գյուղատնտեսությունն, իրավամբ, համարվում է լավագույններից մեկն աշխարհում: Հուսով եմ, որ այս հանդիպումը սկիզբ կդնի երկու երկրների առավել սերտ համագործակցությանը», - նշել է նախարար Սերգո Կարապետյանը:

Արգենտինայի պատվիրակությունը, Հայաստանում գտնվելու ընթացքում, այցելել է նաև գիտական կենտրոններ, վերամշակող ձեռնարկություններ, ֆերմերային տնտեսություններ: Արդյունքում՝ առավել իրատեսական է համարվել համագործակցությունը՝ երկրագործության, անասնաբուծության, մսի վերամշակման և սպանդանոցների կառուցման, սննդամթերքի անվտանգության կարողությունների ուժեղացման, հակակարկտային և ոռոգման ժամանակակից տեխնոլոգիաների կիրառման ասպարեզում:

Հանդիպման ավարտին՝ ՀՀ գյուղատնտեսության նախարարն իր արգենտինացի գործընկերոջը հրավիրեց 2015 թվականին այցելել Հայաստան:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ

ԱՇԽԱՏԱԺՈՂՈՎ՝ ՆՎԻՐՎԱԾ ԱՆՏԱՌՆԵՐԻ ԿԱՅՈՒՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆԸ

Օրերս, Ծաղկաձորում մեկնարկեց Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (GIZ) «Կենսաբազմազանության կայուն կառավարում» ծրագրի շրջանակներում կազմակերպված «Անտառների կայուն կառավարումը Հայաստանում» երկօրյա աշխատաժողովը: Միջոցառմանը մասնակցում էին ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանը, Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության «Հայաստանում կենսաբազմազանության կայուն կառավարում» ծրագրի ղեկավար Թոմաս Էբերհեռը, ՀՀ գյուղատնտեսության նախարարության «Հայանտառ» և «Անտառային պետական մոնիտորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ների, ինչպես նաև հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Աշխատաժողովի նպատակն է՝ համատեղ քննարկել անտառային ոլորտում տիրող իրավիճակը, առկա խնդիրները, գնահատել դրանց լուծման ուղիները և հեռանկարային զարգացման ուղղությունները: Միջոցառմանը բացման խոսքով հանդես եկավ ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանը: Նա մասնավորապես նշեց, որ անտառների պահպանության, պաշտպանության, վերարտադրության, և ընդհանրապես՝ կայուն կառավարման հետ կապված խնդիրները մշտապես գտնվում են ՀՀ գյուղատնտեսության նախարարության ուշադրության կենտրոնում: Նախարար Սերգո Կարապետյանը մեծապես կարևորեց այս ոլորտում Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության հետ համագործակցությունը, որի ընթացքում մի շարք կարևորագույն ձեռքբերումներ են արձանագրվել: Գործարկվել է անտառային պետական մոնիտորինգի հզորացման ծրագիրը, դաշտային ուսումնասիրությունների համար ստեղծվել են անհրաժեշտ պայմաններ, անտառային տնտեսությունները հագեցվել են որոշակի տեխնիկական կարողություններով և այլն:

«Ներկայումս ներդրվում է անտառկառավարման ազգային տեղեկատվական համակարգ, որը թույլ կտա՝ անտառների կառավարմամբ և պահպանությամբ զբաղվող բոլոր հաստատություններին, ստանալ ճշգրիտ և թարմ տեղեկատվություն: Հաջորդ քայլը կլինի տեղեկատվական համակարգը գործնական հարթությունում ամրագրելը, ինչպես նաև տեղեկություններն առավել լայն շրջանակներին հասանելի դարձնելը»,- հավելեց Սերգո Կարապետյանը:

Իր խոսքում նախարարն անդրադարձավ նաև ոլորտում առկա թերացումներին՝ մասնավորապես առանձնացնելով ապօրինի ծառահատումների դեպքերը, բնափայտի մթերման աշխատանքների կազմակերպման աշխատանքներում առկա խնդիրները, անտառապատման և անտառվերականգնման ծավալների ավելացման հարցը՝ նախանշելով դրանց լուծման ուղիներն ու այդ ուղղությամբ իրականացվող միջոցառումները:

Միջոցառման ընթացքում ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանը սերտ համագործակցության համար հուշանվերներով պարգևատրեց «Հայանտառ», «Անտառային պետական մոնիտորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ների, ինչպես նաև հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների:

ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

Գյուղատնտեսության աջակցության հանրապետական կենտրոնում (ԳԱՀԿ) կայացավ ՀԳՌԿՄ 2-րդ վարկային Ծրագրի Սոցիալական Գնահատման փաստաթղթի հանրային քննարկում՝ ՀՀ գյուղատնտեսության նախարարության «Գյուղատնտեսական ծրագրերի իրականացման գրասենյակ» (ԳԾԻԳ) ՊԴ-ի տնօրեն Գ. Խաչատրյանի նախագահությամբ: Փաստաթուղթը ներկայացվեց ԳԾԻԳ ՊԴ-ի խորհրդատու՝ «ՊԱՍՎ» հետազոտական-վերլուծական կենտրոն հասարակական կազմակերպության նախագահ Պ. Ասատրյանի կողմից:

Քննարկմանը մասնակցեցին շահագրգիռ պետական կառույցների, հիմնադրամների, ՀԿ-ների, Հանրապետության մարզերի և համայնքների ներկայացուցիչներ, ինչպես նաև ծրագրի հնարավոր ազդեցությանը ենթարկվող այլ շահագրգիռ կողմեր: Քննարկման նպատակն էր՝ ծրագրի գործողություններին և, մասնավորապես՝ յուրաքանչյուր բաղադրիչի շրջանակներում նախատեսվող միջամտություններին առնչվող հիմնական սոցիալական խնդիրների և ազդեցությունների բացահայտումը, ինչպես նաև՝ սոցիալական հնարավորություններից առավելագույնս օգտվելու և սոցիալական ռիսկերին անդրադառնալու վերաբերյալ առաջարկությունների ներկայացումը:

Սոցիալական գնահատման հաշվետվության նախագիծը հանրամատչելի փաստաթուղթ է, որը ներկայացվել էր հանրային քննարկման, որպեսզի վերջնական փաստաթղթում ներառվեն քննարկումների արդյունքում ստացված շահագրգիռ կողմերի կարծիքներն ու առաջարկությունները՝ ծրագրի բոլոր շահագրգիռ կողմերի կամ ծրագրի հնարավոր ազդեցությանը ենթարկվողների շահերն ապահովելու համար:

Քննարկումն անցավ ներկաների ակտիվ մասնակցությամբ: Նրանց կողմից ներկայացվեցին ծրագրի համար կարևոր մի շարք առաջարկություններ և մեկնաբանություններ, որոնք կընդգրկվեն վերջնական փաստաթղթում:

ԼՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ

ԲԱՑՎԵԼ Է ԿԱՅԱՐԱՆԻ ՇՈՒԿԱՆ

Երևանի քաղաքապետ Տարոն Մարգարյանը «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ տնօրեն Վիկտոր Ռեբեցի և պաշտոնատար այլ անձանց հետ, նոյեմբերի 27-ին ներկա է գտնվել «Կայարանի շուկայի» բացման հանդիսավոր արարողությանը: Այն կառուցվել է «Սասունցի Դավիթ» կայարանի հարևանությամբ նախկինում գործող շուկայի տեղում, որը շուրջ 20 տարի համարվում էր Երևանում գործող գյուղմթերքի ամենամատչելի շուկան:

«Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ տնօրենի ուղեկցությամբ, Երևանի քաղաքապետը շրջել և ծանոթացել է շուկայի պայմաններին, զրուցել գյուղմթերք վաճառողների, ինչպես նաև՝ գնորդների հետ: Օգտվելով առիթից՝ ինչպես վաճառողները, այնպես էլ գնորդներն իրենց գոհունակությունն են հայտնել շուկայում ստեղծված հարմարավետ պայմանների համար: Տարոն Մարգարյանին ներկայացնելով կատարած աշխատանքը՝ Վիկտոր Ռեբեցը նշել է, որ շուկան հիմնովին կառուցվել է եվրոպական չափանիշներին համապատասխան: Ընդհանուր առմամբ, կատարվել է շուրջ 800 մլն դրամի ներդրում, ապահովվել են հիմնական 250 աշխատատեղեր, որոնք, շուկայի ընդլայնման հետ մեկտեղ կավելանան: Նաև նշվել է, որ այս շուկան Երևանում միակն է, որը ձմռանը կջեռուցվի, ունի նաև ջեռուցվող հատակ, իսկ ամռան ամիսներին՝ կհովացվի: Շուկայի պատերն էլ կառուցված են այնպիսի շինանյութով, որը -40-ից +40°C ջերմաստիճանում ապահովում է աշխատանքային անհրաժեշտ պայմաններ: Բացի այդ, կարևորվել է նաև երկաթգծի առկայությունը, ինչն անմիջական և ամենօրյա կապ է ապահովում Արարատի և Արմավիրի մարզի գյուղացիների համար: Տարվա եղանակով պայմանավորված, շուրջ 400-600 գյուղացիների համար, բերքի ամենօրյա իրացման նպատակով, ըստ էության, ստեղծված է առևտրային հարթակ:

Կարևորելով շուկայի գործունեությունը՝ քաղաքապետ Տարոն Մարգարյանն ընդգծել է, որ քաղաքապետարանը ողջունում է նմանատիպ նախաձեռնություններն ու նաև, ելնելով բնակիչների պահանջարկից, պատրաստ է մայրաքաղաքի վարչական այլ շրջաններում ևս, գյուղմթերքի շուկաների կազմակերպման համար համապատասխան նոր տարածքներ հատկացնել: Նոր շուկայի բացումը քաղաքապետարանի և մասնավոր հատվածի միջև համագործակցության հերթական լավ օրինակներից մեկն է:

Շուրջ 5000 քմ տարածք զբաղեցնող շուկան բաղկացած է մեծածախ և մանրածախ առևտրի համար նախատեսված սրահներից: Մեծածախ առևտուրն իրականացվելու է գիշերային ժամերին, որտեղից կարող են գնումներ կատարել ցանկացող բոլոր քաղաքացիները, իսկ առավոտյան ժամերից սկսած մինչև երեկոյան ժամը 8-ը գործում է մանրածախ շուկան, որտեղ վաճառք են իրականացնում ինչպես վերավաճառողները, այնպես էլ այն գյուղացիները, ովքեր չեն հասցրել գիշերն իրացնել իրենց բերքը, կամ պարզապես ցանկանում են անմիջապես իրենք վաճառել այն:

Երևանի քաղաքապետարանի
տեղեկատվության և
հասարակայնության հետ կապերի վարչություն

Ագրոլրատու
Նոյեմբեր 25 - դեկտեմբեր 5, 2014 թ.
թիվ 31 (2053)

ՈՒՍՈՒՑՈՒՄ

Ի ՆՊԱՍՏ ԳԻՏԵԼԻՔԻ ՀԱՐՍՏԱՑՄԱՆ

Օրերս, Վայոց ձորի Գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոնում տեղի ունեցավ հերթական ուսուցողական դասընթացը՝ կազմակերպված Գյուղատնտեսության աջակցության հանրապետական կենտրոնի կողմից: Դասընթացին, ԳԱՄԿ-ի աշխատակիցներից բացի, մասնակցում էին նաև ֆերմերներ:

ԳԱՄԿ-ի տնօրեն Արմեն Եսայանը ողջունեց ներկաներին և շեշտեց, որ այս և նմանատիպ դասընթացներն օգնում են մասնագետներին և խորհրդատուներին՝ մնալ մասնագիտական բարձր մակարդակի վրա, տիրապետել լրացուցիչ տեղեկատվության և գիտելիքների՝ նոր տեխնոլոգիաների, բուժանյութերի վերաբերյալ: Նա շնորհակալություն հայտնեց դասընթացի կազմակերպիչներից, հանձինս՝ ԳԱՀԿ-ի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար, ուսուցման և նորարարական ծրագրերի բաժնի պետ Ա. Հայրապետյանից և նրա հետ ժամանած մասնագետներից: Ա. Հայրապետյանն իր ելույթում առանձնացրեց ագրարային ոլորտի այն ուղղությունները, մասնավորապես՝ բույսերի պաշտպանություն, անասնաբուժություն և մեղվաբուծություն, որոնց մասին պետք է ներկայացնեին ուսուցանողները:

Առաջին թեման՝ բույսերի պաշտպանություն, ներկայացրեց կենսաբանական գիտությունների թեկնածու Ա. Գրիգորյանը, որում մասնավորապես խոսեց հնդավոր և կորիզավոր պտղատեսակների, խաղողի վազի հիմնական հիվանդությունների, ինչպես նաև՝ դրանց դեմ տարվող պայքարի մասին: Ընթացքում ԳԱՄԿ-ի մասնագետների և խորհրդատուների կողմից հնչեցին հարցեր, որոնց պատասխանեց Ա. Գրիգորյանը՝ նշելով, որ յուրաքանչյուր հիվանդություն նախևառաջ ունի զարգացման գաղտնի շրջան և հենց այդ ընթացքում էլ պետք է ֆերմերները սկսեն իրականացնել նախազգուշական միջոցառումներ: Խոսվեց նաև խաղողի միլդիու հիվանդության դեմ 3 նոր պատրաստուկների՝ Ռևոսպոլ, Կվադրիս մաքս, Ռիդոմիլ գոլդ պլյուսի օգտագործման մասին: Հանգամանորեն ներկայացվեց նաև նոր՝ բիոֆորա պատրաստուկը՝ որպես բույսերի աճի խթանիչ:

Երկրորդ թեման վերաբերում էր անասնաբուժությանը: Այս ոլորտը ներկայացրեց կենսաբանական գիտությունների թեկնածու Ս. Եղոյանը: Պատմական փաստերով հարուստ զեկույցի ընթացքում հնչեցին հարցեր՝ բրուցելյոզի, թռչնագրիպի, աֆրիկյան ժանտախտի, ծաղիկի, ինչպես նաև կերային թունավորումների վերաբերյալ:

Երրորդ թեման վերաբերում էր մեղվաբուծությանը, մեղուների խնամքին, հիվանդությունների և վնասատուների դեմ տարվող պայքարի և կանխարգելիչ միջոցառումներին, մեղուների հաջող ձմեռմանը: Այն ներկայացրեց գյուղատնտեսական գիտությունների թեկնածու Կ. Ավետիսյանը: Նա հանգամանորեն ներկայացրեց մեղուների անկման հիմնական պատճառները: Կարևորվեցին վարոատոզ հիվանդության դեմ պայքարի միջոցառումները, բուժանյութերի օգտագործման կարգը: Օգտագործվող պատրաստուկները՝ ֆումիսան, ամիպոլ-Տ, բիսանալ, պետք է ժամանակ առ ժամանակ փոխարինել մեկը մյուսով, քանի որ այդ հարուցիչը ձեռք է բերում հարմարվողականություն տվյալ բուժանյութի նկատմամբ:

Անդրադարձ կատարվեց մեղուների կերակրմանը, պատրաստվող օշարակի և կանդիի չափաքանակնորին, պատրաստման տեխնիկային: Ձմռանը ցանկալի է մեղուներին կերակրել կանդիով: Կ. Ավետիսյանը ներկաներին տեղեկացրեց նաև մեղվաբուծության ներկայիս իրավիճակը ՀՀ-ում, նաև առկա խնդիրները մեղվաբուծությամբ զբաղվող զարգացող երկրներում: Իրականացված դասընթացն ուղղեկցվում էր ցուցադրվող նյութերով, նկարներով, իսկ ԳԱՀԿ-ի կողմից նախապես պատրաստված նյութերը, որոնք տրամադրվեցին բոլոր մասնակիցներին, կօգտագործվեն գյուղացիական տնտեսություններում իրականացվող խորհրդատվական ծառայությունների ընթացքում: ԳԱՄԿ-ին տրամադրվեցին նաև ներկայացվող նյութերի էլեկտրոնային տարբերակները:

Ուսուցման վերջում տեղի ունեցավ ակտիվ քննարկում, հարց ու պատասխան ոչ միայն վերը ներկայացված թեմաների, այլև գյուղատնտեսությանը վերաբերող այլ հարցերի շուրջ:

Ա. Գրիգորյան
Վայոց ձորի ԳԱՄԿ

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ

ԳՅՈՒՂ, ՈՐՆ ԱՅԼԵՎՍ ՉՈՒՆԻ ՏԵԽՆԻԿԱՅԻ ԽՆԴԻՐ

Գյուղատնտեսական տարին մոտենում է ավարտին և այն, Գեղարքունիքի մարզի Շորժա համայնքի գյուղապետ Սուլիկո Շուշանյանի գնահատմամբ, արժանի է բարձր գնահատանքի: Թեև սպասելիքներն ավելի շատ էին: «Գյուղում կատարվել է 340 հա գարնանացան գարու ցանք, միաժամանակ, պետական աջակցության ծրագրի շրջանակներում, օգտվել ենք մատչելի գներով մեզ հատկացված դիզվառելիքից և պարարտանյութից: Բարձր և որակյալ բերք ստանալու համար կատարել ենք ագրոտեխնիկական բոլոր միջոցառումները: Հեկտարից սպասում էինք մինչև 30 ց բերք: Սակայն, բերքատվության վրա զգալիորեն անդրադարձավ տևական երաշտը, որի հետևանքով բույսերի աճը հասունացման շրջանում գրեթե կանգ առավ»,- ասում է պարոն Շուշանյանը: Ինչ վերաբերում է սերմացուի որակին, ապա գյուղապետը նշեց, որ այն բավականին որակյալ էր, դաշտերն ապահովել էին բարձր ծլունակություն: Անհամեմատ բարձր է եղել աշնանացան ցորենի բերքատվությունը: Ընթացիկ տարում աշնանացան է կատարվել 15 հեկտարի վրա: Գյուղում զարգացած է անասնաբուծությունը, ուստի սեփական կերարտադրության ապահովման համար, 1 հեկտարի վրա, կատարվել է եգիպտացորենի փորձնական ցանք: Գյուղապետի գնահատմամբ, արդյունքները գոհացուցիչ էին, և գալիք տարում ցանք են կատարելու ավելի քան 30 հեկտարի վրա:

Ոչխարաբուծությունը Շորժայում անասնաբուծության ավանդական ճյուղերից է: Գյուղապետի տեղեկացմամբ, վերջին շրջանում այն ավելի զարգացավ (գյուղում առկա է 3500 գլուխ ոչխար), ինչը պայմանավորված է արտահանման հնարավորությամբ: «Ջուգահեռաբար ավելացել է նաև խոշոր եղջերավոր կենդանիների գլխաքանակը (գյուղում հաշվվում է 650 գլուխ խոշոր եղջերավոր կենդանի), ինչը նույնպես իրացման խնդրի կարգավորման արդյունք է: Վերամշակող ընկերություններն ամբողջությամբ մթերում են արտադրված կաթը, և գյուղացին, փաստորեն, կաթի իրացման խնդիր չունի»,- ասում է գյուղապետը: Ինչ վերաբերում է մսի իրացմանը, պարոն Շուշանյանի կարծիքով՝ այն դեռևս հիմնախնդիր է:

«Շորժայի և հարակից գյուղերի համար մսի վերամշակման փոքր արտադրամաս կառուցելու դեպքում, գյուղատնտեսական կենդանիների գլխաքանակը տարածաշրջանում կրկնակի կավելանա»,- հավելում է գյուղապետը: Խոզաբուծության զարգացումը դեռևս շարունակում է մնալ ռիսկային, ինչը պայմանավորված է որակյալ անասնակերի ձեռքբերման հետ: «Այնուամենայնիվ, Շորժայի համար անասնաբուծությունն առաջատար ճյուղերից է: Գյուղում առկա է ոչխարաբուծական 4 (յուրաքանչյուրում՝ միջինը 400-500 կենդանի) և տավարաբուծական 3 խոշոր տնտեսություն՝ յուրաքանչյուրը, միջինը՝ 70-80 գլխաքանակով: Գյուղացիական տնտեսություններում ևս խնամվում են 1-ից 15 գլուխ խոշոր եղջերավոր կենդանիներ»,- տեղեկացնում է գյուղապետը:

Շորժան տարածաշրջանի 5 համայնքներից մեկն է, որն ընդգրկվել է ԳՇԻԳ-ի կողմից իրականացվող «Արոտավայրերի բարելավման ծրագրում», որի շրջանակներում ստեղծվել է «Շորժայի արոտօգտագործողների միավորում» կոոպերատիվը: Ծրագրի շնորհիվ ձեռք է բերվել 2 տրակտոր, հակավորող, հնձող-հավաքող տեխնիկա, գութան: Գյուղում տեխնիկայի պակաս չկա, գյուղատնտեսական բոլոր աշխատանքները կատարվում են լիարժեք: Ավարտին են հասցվել արոտավայրերի ջրարբիացման և խմոցների տեղադրման աշխատանքները, ինչը հնարավորություն կընձեռի իրականացնել գյուղից 5 կմ հեռավորության վրա գտնվող արոտավայրերի արդյունավետ կառավարումը: Գյուղապետարանն անում է հնարավորը, որպեսզի անասնապահական ֆերմերային տնտեսությունները հիմնախնդիրներ չունենան, դեռ ավելին՝ զարգանան, առաջընթաց ունենան: «Գյուղատնտեսությունը տնտեսության հիմքն է, առանց որի հնարավոր չէ լուծել սննդամթերքի անվտանգության ապահովման խնդիրը: Ճյուղը, որպես ռիսկային, պետք է սուբսիդավորվի, պայմաններ ստեղծվեն, որպեսզի սակավահող մեր երկրում անմշակ հողատարածքներ չմնան: Գյուղատնտեսությունը, իրո՞ք, գերակա ուղղություն է և այն առանձնակի մոտեցում է պահանջում»,- իր խոսքն ամփոփում է Սուլիկո Շուշանյանը: Շորժան և տարածաշրջանի գյուղերը նախկինում հացահատիկի շտեմարաններ էին: Գյուղապետի մեծագույն փափագն է, որպեսզի երբեմնի այդ բարի համբավը կրկին հետ վերադառնա...

Նելլի Սահակյան

ՍԵՄԻՆԱՐ

ՀԵՐԹԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՂ ՍԵՄԻՆԱՐԸ

Արագածոտնի մարզի Ապարանի տարածաշրջանի Արագած համայնքը հանրապետության ամենամեծ բնակավայրերից մեկն է, ծովի մակերևույթից գտնվում է 2100 մետր բարձրության վրա: Համայնքն ունի 5200 հա գյուղատնտեսական նշանակության հողեր: Բնակիչները հիմնականում զբաղվում են անասնապահությամբ և հողագործությամբ:

Արագածում առկա են 1800 գլուխ խոշոր եղջերավոր կենդանիներ, որից՝ 850 գլուխ կով, 850 հեկտար վարելահողերից շուրջ 450 հեկտարի վրա մշակվում են բոստան-բանջարանոցային մշակաբույսեր, կարտոֆիլ և կաղամբ: Եկամտի հիմնական աղբյուրը՝ անասնապահությունն է:

Հաշվի առնելով այս հանգամանքը և ընդառաջելով արագածցի հողագործին՝ գյուղապետ Հենրիկ Հովհաննիսյանի խնդրանքով, Արագածոտնի ԳԱՄԿ-ի և ԳԱՀԿ-ի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Ա.Հայրապետյանի օժանդակությամբ, կազմակերպվեց հերթական սեմինարը՝ «Գյուղատնտեսական կենդանիների արյան մակաբուծային հիվանդությունները» թեմայով: Հրավիրվել էր ՀԱԱՀ-ի համաճարակաբանության և մակաբանության ամբիոնի վարիչ, անասնաբուժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Հովհաննես Նաղաշյանը, ով մասնակիցներին ծանոթացրեց գյուղատնտեսական կենդանիների արյան մակաբույծ հիվանդություններին, դրանց կանխարգելման և արդյունավետ բուժման մեթոդներին:

Նշված թեմայով սեմինարը գյուղացիների համար շատ օգտակար էր, քանի որ ստացան նոր գիտելիքներ, քննարկեցին իրենց հուզող բազմաթիվ հարցեր և ստացան լիարժեք պատասխաններ:

Տարածաշրջանի համայնքներում, հանրապետության ճանաչված մասնագետների մասնակցությամբ, սեմինարներ կազմակերպելու նպատակը՝ գյուղաբնակ բնակչության լայն խմբերին՝ հողի ճիշտ օգտագործման, դաշտավարության, այգեգործության, բանջարաբուծության և անասնապահության, ինչպես փորձված, այնպես էլ՝ նոր տեխնոլոգիաների մասին իրազեկելն է, որը թույլ կտա՝ փոքր ներդրումների կամ աշխատանքային նոր ձևերի ներդրման միջոցով, բարելավել գյուղատնտեսական արտադրության արդյունավետությունը:

Դասընթացներն օգնում են նաև գյուղաբնակ երիտասարդությանը, քանի որ ստանում են լիարժեք գիտելիքներ, իսկ այդ իմացությունը հետագայում նրանց կօգնի՝ ապահովելու իրենց ընտանիքների բարեկեցությունը:

Վահագն Խաչատրյան
Արագածոտնի ԳԱՄԿ

ՈՒՍՈՒՑՈՒՄ

ԴԱՍԸՆԹԱՑ՝ ԽՈՐՀՐԴԱՏՈՒՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Արագածոտնի ԳԱՄԿ-ում վերջերս խորհրդատուների համար կազմակերպվեց ուսուցողական դասընթաց: Գյուղատնտեսության աջակցության հանրապետական կենտրոնի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Արշալույս Հայրապետյանը ներկայացրեց հրավիրված մասնագետներին և ավելացրեց, որ դասընթացը կօգնի խորհրդատուներին ծանոթանալ գյուղատնտեսության ոլորտի նորույթներին, նաև տեղեկացվել, և էլ ավելի խորացնել գիտելիքների պաշարը:



Մասնագետները դասընթացն ամբողջությամբ վարեցին դիտակտիվ նյութերի միջոցով: Ներկայացված թեմաներն ընդգրկում էին գյուղատնտեսության տարբեր ոլորտներ, որպեսզի խորհրդատուների համար հետաքրքիր և ուսանելի լինի ուսուցումը:

«Կորիզավոր պտղատեսակների հիմնական հիվանդությունները», «Խաղողի վազի հիմնական հիվանդությունները», «Հնդավոր պտղատեսակների հիմնական հիվանդությունները» թեմաները խորհրդատուների համար ներկայացրեց կենսաբանական գիտությունների թեկնածու Ալֆրեդ Գրիգորյանը: «Հակասիբիրախտային միջոցառումներ» թեմայի շուրջ խոսեց անասնաբուժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Հովհաննես Նաղաշյանը, իսկ «Ի՞նչ պետք է արվի, որպեսզի մեղուները հաջող ձմեռեն» թեման ներկայացրեց գյուղատնտեսական գիտությունների թեկնածու Կարեն Ավետիսյանը:

Այնուհետև Արագածոտնի ԳԱՄԿ-ի խորհրդատուները ստացան վերոհիշյալ թեմաների շուրջ ԳԱՀԿ-ի ուսուցման և նորարարական ծրագրերի բաժնի կողմից մշակված բազմաթիվ նյութեր:

Անուշ Մելքոնյան
Արագածոտնի ԳԱՄԿ

ԿՐԹԱԿԱՆ

ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐ՝ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Պրոֆեսոր Խ. Երիցյանի անվան Գորիսի պետական գյուղատնտեսական քոլեջը շուրջ 83 տարի անընդմեջ պատրաստում է միջին օղակի որակյալ գյուղատնտեսական մասնագետներ: Այս ուսումնական հաստատությունը հիմնադրվել է ժամանակի հրամայականով, սկզբնական շրջանում գործել է որպես Հողատեխնիկական տեխնիկում մեկ մասնագիտությամբ, հետագայում բացվել են նոր մասնագիտություններ՝ ագրոնոմիական և անասնաբուժական: Գոծունեության ընթացքում՝ առկա և հեռակա բաժիններում, քոլեջը տվել է 9385 շրջանավարտներ, ովքեր հաջողությամբ աշխատել են ժողովրդական տնտեսության տարբեր բնագավառներում: Քոլեջի տնօրեն Նունե Ավետիսյանը, պատասխանելով մեր հարցերին, ներկայացրեց ուսումնական գործընթացը, հաջողություններն ու խնդիրները:

-Տիկին Ավետիսյան, ի՞նչ մասնագիտություններ են գործում այսօր և ինչպե՞ս եք կազմակերպում ուսումնական գործընթացը:

-Տեխնիկումի հիմնադրումը կարևոր նշանակություն է ունեցել տարածաշրջանի կրթական, գիտական, մշակութային, սոցիալ-տնտեսական կյանքում: Այսօր քոլեջում իրականացվում է միջին մասնագիտական և նախնական /արհեստագործական/ կրթություն՝ առկա, հեռակա ուսուցմամբ: Գործում են՝ «Գյուղատնտեսության մեքենայացում», «Ագրարային մենեջմենթ», «Անասնաբուժություն», «Էկոնոմիկա, հաշվապահական հաշվառում և աուդիտ», «Գյուղատնտեսական աշխատանքների տեխնիկական ապահովում» (լայն պրոֆիլի տրակտորիստ-մեքենավարներ) մասնագիտություններ: Քոլեջում սովորող 250 ուսանողների հետ աշխատում են 28 մանկավարժներ, ովքեր իրենց աշխատանքային, մասնագիտական փորձն ու գիտելիքները փոխանցում են սովորողներին՝ լավ մասնագետներ պատրաստելու համար: Մեր նախկին շրջանավարտների շարքերում կան պրոֆեսորներ, դոցենտներ, գիտության թեկնածուներ, աշխատանքային հերոսներ:

-Որտե՞ղ են անցկացնում ուսանողներն ուսումնաարտադրական պրակտիկաները:

-Մեր կրթական համակարգում խիստ կարևորվում է պրակտիկ աշխատանքների դերը, ինչպես նաև ուսումնաարտադրական բազայի ստեղծումը, որն իր մեջ ներառում է ժամանակակից կահավորում ունեցող արհեստանոց, այգի, հողատարածքներ և այլն: Շուրջ երկու տարի է, ինչ քոլեջի կոլեկտիվը բավականին աշխատանքներ է իրականացրել այդ ուղղությամբ: Առայժմ արտադրական պրակտիկաներն անց են կացվում համայնքներում, ֆերմերային տնտեսություններում, կաթի վերամշակման գործարաններում, հացամթերման ընդունման և վերամշակման ընկերությունում, անասնաբուժասանիտարական և բուսասանիտարական լաբորատորիաներում, մսի ստուգման կայանում, բանկերում, ավտովերանորոգման գործարանում, մեքենատրակտորային մենատնտեսություններում: Առաջիկայում բավականին ծրագրեր ունենք կապված կարճաժամկետ կուրսերի հետ: Վերջերս ստացանք կրթության և գիտության նախարարի թույլտվությունը՝ տրակտորիստ-մեքենավարների կարճաժամկետ կուրսերի բացման համար: Առարկայական ամբիոններում ծրագրեր ենք մշակում նաև այլ կարճաժամկետ կուրսերի համար. համակարգչային ուսուցում, անտառապուրակային աշխատանքներ, քաղաքային լանդշաֆտի ձևավորում, ավանդական գյուղական խոհանոց և այլն:

-Համագործակցու՞մ եք հանրապետության, արտասահմանյան երկրների նմանատիպ ուսումնական հաստատությունների հետ:

-Տարածաշրջանային առումով, սերտ համագործակցություն է ձևավորվել հանրապետության գյուղատնտեսական քոլեջների հետ: Ֆրանսիայի Վիեն և Գորիս քաղաքները քույր քաղաքներ են, հինգ տարի է, ինչ ակտիվ համագործակցություն է ծավալվել Վիենի Ագրոտեկ քոլեջի հետ: Այս տարի մենք հյուրընկալել ենք ֆրանսիացի 30 դասախոսների և ուսանողների՝ փորձի փոխանակման, ինչպես նաև՝ մեր մշակույթին ծանոթացնելու նպատակով:

- Ո՞րն է այսօր համարվում քոլեջի համար հրատապ լուծում պահանջող առաջնային խնդիրը:

-Քոլեջն ունի նյութատեխնիկական բազայի բարելավման, արդիականացման, լաբորատորիայի ձևավորման, սարքավորումների, մասնագիտական գրականության համալրման, մարզադահլիճի կառուցման խնդիրներ: Քոլեջի կոլեկտիվը բազմաթիվ փորձությունների է ենթարկվել՝ կապված Արցախյան գոյամարտի, հրետակոծությունների, քաղաքական ֆորմացիայի փոփոխության անցումային վայրիվերումների, շենքային բազմաթիվ տեղափոխությունների, գիտական, տեղեկատվական, մայրաքաղաքային կենտրոններից ունեցած մեծ հեռավորության դժվարությունների հետ: Սակայն, գյուղատնտեսական կադրերի այս դարբնոցն, այսքան տարիների ընթացքում, անխափան գործում է՝ գիտության լույսը տալով բազմաթիվ սերունդների:

Մ. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

Ագրոլրատու
Նոյեմբեր 25 - դեկտեմբեր 5, 2014 թ.
թիվ 31 (2053)

ԿՈՈՊԵՐԱՑԻԱ

ՎԱՐԿԱՅԻՆ ԿՈՈՊԵՐԱՏԻՎՆԵՐԸ՝ ԱՂՔԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ՄԻՋՈՑ

Վարկային կոոպերատիվն իրավացիորեն դիտվում է՝ որպես գյուղացիների տնտեսական նախաձեռնությունները կյանքի կոչող, կայուն զարգացում և արդյունավետ կառավարում իրականացնելու կազմակերպական ձևերից մեկը: Դրանք ստեղծվում են կոոպերատիվի անդամների վարկավորման և դրամական միջոցների խնայողությունների ապահովման նպատակով: Վարկային կոոպերատիվների փայատերերն ավանդատուներ չեն, նրանք սեփականատերերն են:

Ներկայումս ագրարային ոլորտում տնտեսական վերելք ակնկալելն՝ առանց վարկային կոոպերատիվների, անհնար է, և դրանց ձևավորումը հրամայական պահանջ է, քանի որ ներկա պայմաններում ձևավորված վարկային ինստիտուտներից չեն կարողանում օգտվել բոլոր գյուղացիական տնտեսությունները, կամ օգտվելիս էլ զարգացման ընդհանուր արդյունքները գոհացուցիչ չեն:

Հետևապես, վարկային կոոպերատիվների ձևավորումը գյուղատնտեսությունում ինքնանպատակ չէ: Այն ունի որոշակի տնտեսական հիմքեր:

Գյուղատնտեսական վարկային կոոպերատիվներն առաջին անգամ ձևավորվել են Գերմանիայում և աստիճանաբար տարածում գտնելով տարբեր երկրներում, զարգացման շնորհիվ հասել են բարձր արդյունքների:

Պատմականորեն հայտնի են վարկային կոոպերատիվների երեք տիպեր՝ գյուղատնտեսական վարկային դրամարկղեր, փոքր գործարարներին և արհեստավորներին սպասարկող կոոպերատիվներ, մատակարարող-իրացնող-վարկավորող կոոպերատիվներ:

Գյուղատնտեսության վարկային կոոպերատիվների ձևավորման և գործառութների սահմանման համար անհրաժեշտ է իմանալ և կիրառել մի շարք կարևոր սկզբունքներ, որոնք պարտադիր են կոոպերատիվների զարգացման և հետագա կայունության համար:

Վարկային կոոպերատիվների կազմակերպման սկզբունքները մշակվել են՝ սկսած XIX դարի երկրորդ կեսից, որում անգնահատելի ավանդ և ներդրում ունի Ֆ. Ռայֆայզենը:

Վարկային կոոպերատիվները, կամ ինչպես այն անվանվում է՝ «վարկային ընկերությունը», աղքատության հաղթահարման կարևոր միջոցներից մեկն է, քանի որ ձևավորվում է այնպիսի անփոխարինելի սկզբունքների վրա, որոնցից յուրաքանչյուրի ընդունումն ու պահպանումը, առաջին հերթին, ուղղվում է անմիջապես կոոպերատիվի անդամի շահերին և նպաստում նրանց շահագրգռվածության և արտադրատնտեսական ցուցանիշների բարելավմանը: Դրանցից մի քանիսը, ինչպիսիք են՝ փայավճարների բացակայությունը, միայն համայնքի շրջանակում անդամների ընդգրկումը, նրանց թվաքանակի սահմանափակումը, կոոպերատիվի անդամ չհամարվող անձանց վարկից օգտվելու արգելումը և սահմանափակումը, այլ կոոպերատիվներին անդամակցության արգելումը և այլն: Ինչ խոսք, դրանք մեր պայմաններում արդի փուլի համար ամենակիրառելի սկզբունքները կարող են լինել՝ նոր վարկային կոոպերատիվների ստեղծման համար:

Տնտեսագիտական գրականության մեջ վարկային կոոպերատիվները հաճախ անվանվում են՝ որպես կոոպերատիվ շարժման այն հզոր ուժը, որը կարողանում է համախմբել բոլոր ռեսուրսները և դրանք նպատակամղել արտադրության, վերամշակման, իրացման, սպառման ոլորտների բոլոր շահագրգիռ մասնակիցների հիմնական նպատակների իրականացմանը:

Վարկային կոոպերատիվը կամավոր, ինքնուրույն, դեմոկրատական սկզբունքներով կառավարվող մարդկանց միավորում է, որը ստեղծվում է կոլեկտիվ դրամական ֆոնդի հիման վրա և միջոցներն ուղղվում են անդամների վարկավորման և նրանց ապահովագրման համար:

Վարկային կոոպերատիվն իրավաբանական անձ է, ունի ինքնուրույն հաշվեկշիռ և հաշիվներ բանկերում: Դրանք չպետք է շփոթել այլ կազմակերպական ձևերի հետ, քանի որ հիմնական նպատակը՝ փայատերերի փոխադարձ վարկավորումն է: Թեպետ այն իր էությամբ հանդես է գալիս որպես միջնորդ՝ փող ունեցողների և դրանց կարիքը զգացող անձանց միջև, սակայն գործունեության և պատասխանատվության բովանդակությունը բոլորովին այլ է, որի համար, այս ուղղությամբ քայլեր ձեռնարկելիս, անհրաժեշտ է մանրամասն ուսումնասիրել իրավիճակը և իրականացնել մեծ թվով նախապատրաստական աշխատանքներ՝ շահագրգիռ կողմերին հասանելի դարձնելով կազմակերպման սկզբունքները, գործառույթները, միջոցների ձևավորման և օգտագործման մեխանիզմները:

Վարկային կոոպերատիվն այնպիսի կարգավիճակ ունեցող կազմակերպական միավոր է, որը պատկանում է փայատերերին և կառավարվում է անդամների կողմից ընտրված կառավարիչների միջոցով:

Աշխարհում առաջին վարկային կոոպերատիվների հատկանիշներ ունեցող կազմակերպությունները ձևավորվել են Անգլիայում, այնուհետև՝ ԱՄՆ-ում, Գերմանիայում, Ռուսաստանում, Հոլանդիայում, Կանադայում և Իտալիայում:

Յուրաքանչյուր երկրում վարկային կոոպերատիվները ստեղծվել են՝ ելնելով կոնկրետ տնտեսական պայմաններից և քաղաքական իրավիճակներից: Սովորաբար, դրանք սկսում են ակտիվանալ, եթե առկա են որոշակի նախադրյալներ և ֆինանսական միջոցների համախմբման անհրաժեշտություն:

Փորձը ցույց է տալիս, որ վարկային կոոպերատիվները կազմակերպվում են երկու խումբ գործառույթների՝ (ակտիվ և պասիվ) իրականացման նպատակով: Կոոպերատիվները, ակտիվ գործառույթների միջոցով, մատչելի վարկեր են տրամադրում անդամներին, իսկ պասիվ գործառույթների միջոցով՝ ելնելով միջոցների պակասի լրացման անհրաժեշտությունից, վարկային ռեսուրսներ են ներգրավում այլ բանկային կազմակերպություններից:

ԱՄՆ-ում նման կոոպերատիվները ստեղծվել են ֆերմերների համար գյուղատնտեսական վարկերի կայուն աղբյուր ապահովելու համար, քանի որ մինչև

6

ՄԱՄՆԱԳԵՏԻ ԽՈՐՀՈՒՐԴ

ԿՈՎԵՐԻ ՀԱՋՈՂ ՁՄԵՌՈՒՄԸ՝ ԿԱԹՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ԵՐԱՇԽԻՔ

Կենդանիների ձմեռային (մսուրային) շրջանը խիստ պատասխանատու գործընթաց է, հետևապես, դրան պետք է պատրաստվել նախապես: Մինչև տավարի մսուրային պահվածքին անցնելը, անհրաժեշտ են մի շարք նախապատրաստական աշխատանքներ: Նախ՝ հարկ է նորոգել անասնագոմերը, կարգի բերել տանիքը, անասունների կանգնելատեղերը, լուսամուտները, դռները, մսուրները, կապերը, ինչպես նաև՝ ջուր խմելու, կթելու, գոմաղբի հեռացման մեքենասարքավորումները, ախտահանել և մաքրել գոմերը: Ախտահանումները տարվում են կրեոլինի՝ 3, քլորաքրի՝ 2 կամ կծու նատրիումի 3 %-անոց լուծույթներով, մեկ քառակուսի մետրին՝ 0.5 լիտրի հաշվով: Հանգած կրի 15 - 20 %-անոց ջրային լուծույթով սպիտակեցվում են նաև գոմերի պատերը, առաստաղը, պատուհանները, սյուները, մատղաշի վանդակները:

Հաջող ձմեռումը պայմանավորվում է անհրաժեշտ քանակի և որակյալ կերերի առկայությամբ: Հայաստանի տավարաբուծության զարգացման ընթացքի վերլուծությունը ցույց է տալիս, որ կենդանիների ցածր մթերատվությունը պայմանավորված է, առաջին հերթին, դրանց անբավարար կերակրմամբ, հատկապես ձմեռային-մսուրային շրջանում:

Դեռևս իր ժամանակին ակադեմիկոս Ալեքսանդր Թամամշևը գրել է, որ կերի պակասը հանդիսանում է Հայաստանի տավարաբուծության զարգացման գլխավոր չարիքը: Ներկայումս էլ շատ տնտեսություններում տավարը կերերով ապահովված է պահանջի շուրջ 50 - 60 տոկոսի չափով: Մինչդեռ, նորմալ կերակրման և այսօրվա ցեղային կազմի առկայության պայմաններում, կովերի կաթնատվությունը կարող է լինել 2500 - 3500 կգ և ավելի: Հետևապես՝ ձմեռմանը նախապատրաստվելու կարևոր հարցերից մեկը՝ կերերի անհրաժեշտ պաշարի ստեղծումն է: Ստորև ներկայացվում է տարբեր մթերատվություն ունեցող կովերի պահանջը՝ կերի միավորի և մարսելի պրոտեինի նկատմամբ՝ ամբողջ տարվա, այդ թվում մսուրային շրջանի համար, մեկ կովի հաշվով: Տվյալները հավաստում են՝ որքան բարձր է կովերի կաթնատվությունը, այնքան շատ կեր է պահանջվում մեկ կովի հաշվով, սակայն նվազում է յուրաքանչյուր մեկ կգ կաթի արտադրության վրա կերի ծախսը: Եթե 2000 կգ կաթնատվություն ունեցող կովի յուրաքանչյուր մեկ կգ կաթի արտադրության համար պահանջվում է 1.4 կերի միավոր, ապա 5000 կգ կաթնատվությամբ կովի դեպքում՝ 1.02 կերի միավոր: Այստեղից էլ ակնհայտ է բարձր մթերատու կովեր ունենալու տնտեսական արդյունավետությունը:

Մսուրային շրջանում առանձնակի հոգ է տարվում հղի ցամաք կովերի նկատմամբ: Դրանց ցամաքեցնում են 50 - 60 օր ծնելուց առաջ, ապահովելով անհրաժեշտ քանակի և որակի կերերով, ինչը հարկավոր է հղիության շրջանի վերջին ամիսներին՝ կենդանու սնվածությունը բարձրացնելու, պտղի նորմալ աճի և ծնելուց հետո շատ կաթ ստանալու համար:

Հղի ցամաք կովերի օրական կերաբաժինը, սպասվող կաթնատվության մակարդակից ելնելով, պետք է պարունակի 7.5 - 8.5 կերի միավորին համարժեք կերեր:

Հարկ է, որ կթու կովերը ապահովված լինեն բազմազան և անհրաժեշտ քանակի կերերով: Կերակրման նորմաների համաձայն, 400-500 կգ կենդանի զանգված ունեցող, օրական 8 կգ կաթ տվող կովին պետք է տալ 8-8.6 կերի միավորին համարժեք կերեր, 10 կգ կաթ տվողին՝ 9-9.6 կմ, 12 կգ կաթ տվողին՝ 10-10,6 կմ, 14 կգ կաթ տվողին՝ 11-11.6 կմ, 16 կգ կաթ տվողին՝ 12-12.6 կմ, 18-20 կգ կաթ տվող կովերի կերաբաժինը պետք է կազմված լինի 14.2 - 14.6 կերի միավորին համարժեք կերերից: Ելնելով առաջարկված կերի նորմաներից, տնտեսություններում անասնատերերը կազմում են կերաբաժիններ և ապահովում կենդանիների նորմալ կերակրումը:

Կթվող կովերը ծնելուց հետո, 3 - 4 ամիսների ընթացքում, ֆիզիոլոգիապես ընդունակ են լիակթելու, այսինքն՝ ապահովելու բարձր կաթնատվություն: Ուստի, տվյալ ժամանակահատվածում, սահմանված նորմայից բացի, լրացուցիչ տրվում են 2 - 3 կերի միավորին համարժեք կերեր և հետևում լիակթման ընթացքին: Եթե լրացուցիչ տրվող կերը չի նպաստում կաթնատվության բարձրացմանը, ապա կերակրում են նորմայով սահմանված չափով: Կթու կովերի կերաբաժինը պետք է բաղկացած լինի հիմնականում ծավալային կերերից: Լավ որակի խոտը հանդիսանում է պրոտեինի, վիտամինների և հանքային նյութերի հիմնական աղբյուր: Կերաբաժնում որոշակի տեղ են զբաղեցնում սիլոսը և արմատապալարապտուղները (ճակնդեղ, գոնգեղ, գազար, կարտոֆիլ): Դրանք կաթնառատ կերեր են, պարունակում են մեծ քանակությամբ դյուրամարս ածխաջրատներ, հատկապես՝ շաքարների և օսլայի ձևով, հարուստ են նաև կարոտինով: Խտացրած կերերը (եգիպտացորենի, գարու, վարսակի, ցորենի, վիկի, ոսպի, ոլոռ-սիսեռի, ինչպես նաև՝ արևածաղկի, բամբակենու, կտավատի քուսպը և շռոտը) մեծ չափով էներգակիր կերեր են, դրանց մեծ մասը հարուստ է նաև պրոտեինով:

6

5 ↖ ԿՈՈՊԵՐԱՑԻԱ

ՎԱՐԿԱՅԻՆ ԿՈՈՊԵՐԱՏԻՎՆԵՐԸ՝ ԱՂՔԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ՄԻՋՈՑ

դրանց ձևավորումը, վարկերը կարճաժամկետ էին, ունեին բարձր տոկոսադրույքներ և մատչելի չէին գյուղատնտեսական գործունեության համար: Որոշակի տարբերություններով, տնտեսական իրադրությունից կախված, նմանատիպ խնդիրներ լուծելու համար վարկային կոոպերատիվներ կազմավորվեցին նաև այլ երկրներում:

Հայաստանի Հանրապետությունում վարկային կոոպերատիվները որոշակի ուղի են անցել: Առաջին նմանատիպ ֆինանսական կառույցը Հայգյուղփոխբանկն էր, որը հետագայում վերակազմավորվեց ԱԿԲԱ-Կրեդիտ Ագրիկոլի: Այն կոչված լինելով գյուղատնտեսական տնտեսությունների վարկային կարիքների բավարարմանը՝ մատչելի տոկոսադրույքներով զարգացման վարկեր տրամադրելու խնդիրը չլուծեց, չնայած այն անժխտելի դեր խաղաց գյուղացիական տնտեսությունների համար, ֆինանսական միջոցներից օգտվելու որոշակի մշակույթ ձևավորելու գործում:

ՀՀ-ում որոշակի քայլեր կատարվեցին այս տիպի միավորների կազմավորման ուղղությամբ (վարկային ակումբներ), որոնք նույնպես չհաջողվեց զարգացնել, քանի որ հաշվի չառնվեցին հայաստանյան միջավայրն ու կոնկրետ պայմանները: 2002թ. ընդունված «Վարկային ակումբների մասին» ՀՀ օրենքը հնարավորություն տվեց ստեղծելու մի քանի տասնյակ վարկային ակումբներ, որոնք երկարատև կյանք չունեցան ու արագ լուծարվեցին, քանի որ դրանք ստեղծվեցին՝ առանց անհրաժեշտ ուսումնասիրության, նախապատրաստման և հիմնավորման:

Չկատարելով նույն քայլերը և հաշվի առնելով դրանց թերությունները, 2007թ. ՀՀ-ում ֆերմերների մասնակցությամբ, նախապատրաստական, հետազոտական, բացատրական և ուսուցողական ծավալուն աշխատանքի շնորհիվ, ստեղծվեց «Ֆարմ կրեդիտ Արմենիա» վարկային կոոպերատիվ բազմաֆունկցիոնալ կազմակերպությունը: Ամենահիմնական սկզբունքն այն էր, որ հաստատվեց յուրաքանչյուր անդամի փայամասնակցությունը և այն գրանցվեց ՀՀ կենտրոնական բանկում և հավաստագրվեց սահմանված փաստաթղթերով: Չնայած սուղ միջոցներին և ընդգրկման ծավալներին, կազմակերպությունը ներկայումս արդյունավետ գործունեություն է ծավալում իր անդամներին և գյուղացիական տնտեսություններ վարողներին ֆինանսական և տեխնիկական աջակցություն ցուցաբերելու գործում:

Բազմաթիվ օրինակներ կան վարկային կոոպերատիվների կազմակերպման գործում, դրանք կարող են բազմակողմանիորեն հիմնավորվել, սակայն շուկայական տնտեսության պայմանների առանձնահատկություններից ելնելով, գործնական խնդիրներ լուծելիս, պետք է կիրառել կոոպերատիվ վարկավորման գերմանական կամ շվեյցարական համակարգերից որևէ մեկը:

Գերմանական համակարգ - վարկավորումն իրականացվում է՝ անմիջապես վարկային կոոպերատիվների կամ նրանց միավորների կողմից, որի դեպքում, որպես կանոն, վճարումների դրույքաչափերը բարձր են. վարկերը տրամադրում են միայն նյութական երաշխիքների դեպքում:

Շվեյցարական համակարգ - վարկերը տրամադրվում են հատուկ կազմակերպությունների կողմից, որոնք հանդես են գալիս որպես երաշխավոր: Նրանք վարկեր չեն տրամադրում, հանդես են գալիս որպես իրենց անդամների երաշխավորներ այլ վարկային կազմակերպությունների առջև: Կոոպերատիվների փորձագետների կողմից ներկայացվում է վարկառուի գույքային և վճարունակության վիճակը, որի հիման վրա, կոոպերատիվը տալիս է երաշխավորություն:

Հաշվի առնելով վարկային կոոպերատիվների կարևորությունը և աշխարհի երկրների փորձը, պարզվում է, որ համակարգի ձևավորման համար պետական աջակցությունն անհրաժեշտ է և պարտադիր:

Բոլոր այն երկրներում, որտեղ գյուղատնտեսությունը կարևորվել է և ընդունվել որպես առաջնահերթ ոլորտ, կոոպերատիվ վարկավորման համակարգը դիտարկվել է լավագույն գործիքներից մեկը՝ գյուղի և գյուղատնտեսության, ինչպես նաև, ընդհանուր առմամբ ագրարային ոլորտի կայուն զարգացման և ամրապնդման գործում:

Չնայած վարկային կազմակերպությունների ստեղծման համար ներկայումս առկա են որոշակի իրավական հիմքեր, սակայն կան մի շարք դրույթներ, որոնք հստակության կարիք ունեն: «Գյուղատնտեսական կոոպերատիվների մասին» օրենքի ընդունման ժամանակ դրանց վերաբերյալ առանձին հոդվածների ընդունումն անհրաժեշտություն է:

Քանի որ վարկային կոոպերատիվներն իրենց գործառույթների բնույթով հիմնականում ծառայում են գյուղատնտեսությանը, ապա պետք է հստակեցվեն պետական քաղաքականության ուղղություններն ու արտոնության մեխանիզմները:

Գյուղացիական տնտեսություններ վարողների, մասնագետների տեղեկացվածության և գիտելիքների խորացման նպատակով, դասընթացների, ինչպես նաև տեղեկատվության տարածման բոլոր միջոցներով պետք է մշակել ծրագրեր և, առաջին հերթին, փորձնական կարգով, մի շարք տարածաշրջաններում ձեռնամուխ լինել դրանց ներդրմանը:

Հ.Ս. Ջավադյան
ՀԱԱՀ, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ

5 ↖ ՄԱՄՆԱԳԵՏԻ ԽՈՐՀՈՒՐԴ

ԿՈՎԵՐԻ ՀԱՋՈՂ ԶՄԵՌՈՒՄԸ՝ ԿԱԹՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ԵՐԱՇԽԻՔ

Խտացրած կերերն առավել կարևոր նշանակություն ունեն կովերի լիակթման ժամանակ, լակտացիայի առաջին ամիսներին: Որքան բարձր է կովերի կաթնատվությունը, այնքան մեծ է խտացրած կերերի պահանջը, սակայն դրանց օգտագործումը պետք է լինի տնտեսապես շահավետ: Խտացրած կերերը կովերի կերաբաժնում կարող են լինել հետևյալ չափերով. տարեկան 2000 կգ կաթնատվության դեպքում, յուրաքանչյուր մեկ կգ կաթի դիմաց՝ 100-150 գրամ, կաթնատվության՝ 2000 - 3000 կգ դեպքում՝ 150-200 գ, 3000-ից բարձր կաթնատվության դեպքում՝ 200 գրամից մինչև 350 գրամ՝ մեկ կգ կաթի դիմաց:

Նախրի նորոգման էգ մատղաշի կերակրումն անհրաժեշտ է կազմակերպել այնպես, որպեսզի ապահովվեն ցեղի (կովկասյան գոր2) ստանդարտով նախատեսված կենդանի զանգվածի ցուցանիշները, դրանք են՝ 6 ամսականում՝ 140 կգ, 12-ում՝ 230 կգ, 18-ում՝ 320 կգ, իսկ զուգավորման ժամանակ (18-20 ամսականում), առնվազն, 350 կգ: Նորոգման մատղաշի օրական միջին քաշաճները, դրանց աճեցման տարբեր ժամանակաշրջաններում, կազմում են ոչ պակաս 600 գրամ: Այդ ցուցանիշներն ապահովելու համար նախրի նորոգման էգ մատղաշին օրական պետք է կերակրել. մինչև 6 ամսականը՝ 3.0 - 3.5 կերի միավորին համարժեք կերերով, 7 - 9 ամսականներին՝ 3.5 - 4.0, 10 -12 ամսականներին՝ 4.0-4.5, 13-15 ամսականներին՝ 4.5-4.7 և 16-18 ամսականներին՝ 4.8-5.0 կերի միավորին համարժեք կերերով: Մեկ կերի միավորի հաշվով՝ պահանջվում է 95 -110 գ մարսելի պրոտեին: Կաթնային շրջանում (մինչև 6 ամսականը) գոյություն ունեն հորթերի կերակրման տարբեր սխեմաներ: Այդ սխեմաներով՝ մեկ հորթի կերակրման համար նախատեսվում է տարբեր քանակի անարատ (180, 200, 275, 350 կգ) և սերզատած (200, 400 կգ) կաթ: Ֆերմերներն իրենց հնարավորություններից և մատղաշի աճեցման նպատակից ելնելով, կարող են օգտվել այս կամ այն սխեմայից և հորթերին տալ համապատասխան քանակությամբ կաթ: Մատղաշի աճեցման հետկաթնային շրջանում նույնպես մեծ ուշադրություն է դարձվում դրանց կերակրմանը: Հաստատված է, որ

սեռական հասունության շրջանում (8 ամսականից) էգ մատղաշի և երինջների բարձր մակարդակով կերակրումը նպաստում է կաթնագեղձի լավ զարգացմանը և բարձր կաթնատվության դրսևորմանը:

Դրա հետ մեկտեղ, երինջների (զուգավորված էգ մատղաշ) լավ կերակրումը շատ կարևոր է, քանի որ սկսում է ինտենսիվ աճել և պտուղն արգանդում մեծանում է: Երինջներին օրական տրվում են 5-6 կերի միավորին համարժեք, իսկ հղիության 5 - 6-րդ ամսից սկսած՝ 6.5 - 7.5 կերի միավորին համարժեք կերեր:

Երինջների և ապա առաջին լակտացիայի կովերի լիարժեք կերակրումը նպաստում է նաև դրանց կենդանի զանգվածի ավելացմանը, քանի որ դրանք դեռևս երիտասարդ են և կարող են մեծ չափով ավելացնել կենդանի զանգվածը, օրինակ՝ զանգվածի 10 կգ-ով ավելանալու դեպքում, կաթնատվությունն ավելանում է 80-100 կգ-ով:

Հետկաթնային շրջանում մատղաշին և երինջներին տրվող հիմնական կերերը տնտեսությունում արտադրվող կոպիտ և հյութալի կերերն են՝ խոտը, ծղոտը, սիլոսը և այլն, որոնք պետք է կազմեն կերաբաժնի 75 - 80 տոկոսը, իսկ շուրջ 20 - 25 տոկոսի չափով կարելի է տալ խտացրած կերեր: Մսուրային շրջանում մատղաշին կերակրում են օրվա մեջ երկու անգամ՝ առավոտյան և երեկոյան, տալիս են կոպիտ և հյութալի կերեր, իսկ խտացրած կերերը՝ առավոտյան:

Կենդանիների մսուրային պահվածքի տեխնոլոգիայի անհրաժեշտ տարրերից է դրանց ամենօրյա զբոսանքի կազմակերպումը՝ 2 կամ 3 ժամ տևողությամբ: Այն հնարավորություն է տալիս պահպանել կենդանիների առողջությունը, ապահովել դրանց բարձր վերարտադրողական ֆունկցիան, բարձր մթերատվությունը, նաև ավելացնում տնտեսական օգտագործման տևողությունը: Մսուրային շրջանում կենդանիները պետք է ապահովված լինեն նաև խմելու ջրով, որի պահանջը, մեկ կովի հաշվով, կազմում է 65 լիտր, երինջներինը՝ 40, մատղաշինը՝ 25, իսկ հորթերի համար պահանջվում է օրական 10 լիտր խմելու ջուր: Ջուրը պետք է համապատասխանի «Խմելու ջուր» ստանդարտի պահանջներին: Կարևոր նշանակություն ունի նաև կենդանիներին կերակրի աղով ապահովումը: Կենդանին պետք է այն ստանա ամեն օր: Մեկ կովի համար ամսական պահանջվում է 2.5 - 3.0, իսկ մեկ մատղաշի համար՝ 1.5 - 2 կգ աղ:

Խաչատուր Սիմոնյան
Գյուղատնտեսական գիտությունների դոկտոր

Ագրոլրատու
Նոյեմբեր 25 - դեկտեմբեր 5, 2014 թ.
թիվ 31 (2053)

ԳԻՆԵԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԵՐԻ ՄՏՔԵՐՆ ԱՐԵՎՄՈՒՏՔՈՒՄ ԵՆ, ԻՍԿ ՍՐՏԵՐՆ՝ ԱՐԵՎԵԼՔՈՒՄ

Գինեգործության ոլորտն այսօր Հայաստանում դինամիկ կերպով զարգանում է, քանի որ տեղական սպառողը վերստին ձեռք է բերում Հայկական Լեռնաշխարհում գինեգործության հազարամյակների պատմություն ունեցող ավանդույթը կրողի հատկանիշները: Սակայն չպետք է թերագնահատել նաև արտահանման շուկաները. չէ որ «գլոբալ» սպառողը և գինով «արբեցած»շուկաներն այսօր փնտրում են առանձնահատուկ և եզակի համուհոտեր:

Գինեգործ մասնագետների աճող պահանջարկը բավարարելու նպատակով, Ագրոբիզնեսի հետազոտությունների և կրթության միջազգային կենտրոնը, «Սեմինա Քոնսալթինգ» ՍՊԸ-ի հետ միասին, հիմնադրեց Ի-Վի-Էն գինու ակադեմիան, որը գինեգործության և գինու բիզնեսի ոլորտում ամենաարդիական կրթությունն է առաջարկում երկրում: Գինու ակադեմիան առաջարկում է գինեգործության և գինու բիզնեսի վերաբերյալ կարճատև դասընթացներ, ինչպես նաև մասնագիտական որակավորման 18-ամսյա ծրագիր: Գինու ոլորտի արդիական կրթության լուրջ պահանջարկի հարցում ԱՀԿՄԿ հիմնադրամը չէր սխալվել. մի քանի փուլով ընտրված մեր սանները գլխավորապես գործող գինեգործներ, ուսանողներ, գինեսերներ են: «Ներկայումս ես Հայաստանում եմ՝ ԱՀԿՄԿ հիմնադրամի Գինու ակադեմիայի զարգացմանը նպաստելու երկու տարվա առաքելությամբ: Սերտորեն աշխատում եմ հիմնադրամի աշխատակազմի հետ: Չեմ դադարում զարմանալ այս երկրի հարուստ մշակույթով»,- նշել է Ի-Վի-Էն գինու ակադեմիայի զարգացման գծով տնօրեն, գինու ոլորտի գործարար, անգլերենի դասախոս Էդվարդ Բինդերը:

Հիմնադրամի գործընկերներից մեկը մի անգամ այսպիսի միտք արտահայտեց. «Հայերի մտքերն արևմուտքում են, իսկ սրտերն՝ արևելքում»: Կարծում եմ, այս միտքը կարելի է կիրառել նաև հայկական գինիների առնչությամբ. Հայաստանում Եվրամիության չափորոշիչներով գինու արտադրությունը, պահպանելով Արևելքի մշակութային կատարելությունը, արժեքավոր և, անկասկած, պահանջարկված ներդրում է երկրի տնտեսության մեջ:

Սոս Ավետիսյան
ԱՀԿՄԿ հիմնադրամի
հանրային կապերի
մասնագետ

ՀԻՇԱՏԱԿԻՆ

ԽՈՐ ՎՇՏՈՎ

Կյանքից անժամանակ հեռացավ ՀՀ գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի գյուղատնտեսության զարգացման ծրագրերի վարչության գյուղատնտեսության ծրագրավորման բաժնի պետ Հերիքնազ Հակոբի Լեմբերյանը:

Ավելի քան երկու տասնամյակ Հ. Լեմբերյանը ջանասիրաբար ու մեծ նվիրումով աշխատել է ՀՀ գյուղատնտեսության նախարարությունում: Նրա գործունեությունն առնչվում էր ագրարային ոլորտի ծրագրային փաստաթղթերի մշակման բարդ բնագավառին, որն իրականացնում էր մեծ սիրով ու պատասխանատվությամբ: Հերիքնազ Լեմբերյանը վայելում էր նախարարության ողջ կոլեկտիվի և համակարգի աշխատողների սերն ու հարգանքը: Լինելով մասնագիտական բարձր հմտություններով օժտված, աշխատասեր, բարի անձնավորություն՝ միշտ պատրաստակամ էր օժանդակելու և աջակցելու իր գործընկերներին: Նա իր փորձն ու գիտելիքները սիրով փոխանցում էր երիտասարդ մասնագետներին, առանձնահատուկ հոգատարությամբ էր աշխատում տարբեր ուսումնական հաստատություններից նախարարությունում պրակտիկա անցնող ուսանողների հետ:

Հերիքնազ Լեմբերյանի բարի, ազնիվ, արդարամիտ, պարզ ու շիտակ մարդու՝ հիշատակը վառ կմնա նախարարության աշխատակազմի, համակարգի աշխատողների ու նրան ճանաչողների սրտերում:

ՀՀ գյուղատնտեսության նախարարություն

ԴԻՄԱՆԿԱՐ

ԿԱՐԵՎՈՐԸ՝ ԳՈՐԾԻ ՀԱՋՈՂ ՍԿԻԶԲՆ Է

Վալյա Խաչատրյանը Կոտայքի մարզի Ակունք գյուղից է: Սկզբում մշակել է բակի փոքրիկ հողատարածքը, հետագայում այն ընդլայնել է և զբաղվել հացահատիկային մշակաբույսերի մշակությամբ, հետո սկսել է զբաղվել անասնապահությամբ: Ընտանիքի հետ միասին փորձել է հաղթահարել առաջացած դժվարությունները: Իր տնտեսությունում արտադրված կաթը վերամշակում է տնային պայմաններում՝ սպառողին առաջարկելով անարատ կաթնամթերք: Արդեն ունի կայուն շուկա: Արդյունքում՝ վերամշակված արտադրանքը՝ ձավարի, բլղուրի, փոխինձի տեսքով, կարողանում է իրացնել գյուղատնտեսական տոնավաճառներում: «Ինչպես բոլոր հայ կանայք, այնպես էլ ես, երազում եմ, որ ընտանիքս բարեկեցիկ ապրի»,- ասում է տիկին Վալյան: Հեռակա նպատակներ ունի. մտածում է ստեղծել կաթի վերամշակման արտադրամաս:

Հետևողական աշխատանքը հետագայում տվել է իր արդյունքները: Ներկայումս ստեղծել է իր ընտանեկան «բիզնեսը», որը, հուսով է, հետագայում ծաղկում կապրի:

Նարինե Անդրեասյան
Կոտայքի ԳԱՄԿ

ՈՌՈԳՈՒՄ

ԱՐՏԵՆԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՆՁՆՎԵՑ ԽՄԵԼՈՒ ՋՐԱՏԱՐ

Օրերս, Արագածոտնի մարզում շահագործման հանձնվեց Արտենի համայնքի խմելու ջրատարը: Ծրագիրն իրականացվել է մարզպետարանի, ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության՝ «Մաքուր էներգիա և ջուր» ծրագրի և համայնքի համատեղ ուժերով: Բացման հանդիսավոր արարողության մասնակիցները բարձր գնահատեցին ծրագրի հաջողությունները՝ նշելով, որ՝ ջրամատակարարման ցանցի բարելավման շնորհիվ, բոլոր տնային տնտեսություններն այժմ ունեն օրական մինչև հինգ ժամ ջրամատակարարում:

Ջրամատակարարման ցանցի բարելավման հետ մեկտեղ, տնային տնտեսություններում տեղադրվել են ջրաչափեր, որոնց շնորհիվ բարելավվել է նաև սպառվող ջրաքանակի հաշվառման գործընթացը՝ հնարավորություն տալով ճշգրիտ հաշվառել բնակիչների կողմից փաստացի օգտագործվող ջրաքանակը:

Ջրագծի բացման կապակցությամբ, ներկաներին ողջունեց մարզպետի տեղակալ Մ. Աբգարյանը՝ շնորհակալություն հայտնելով «Մաքուր էներգիա և ջուր» ծրագրին՝ համայնքում 6,5 կմ երկարությամբ ջրագիծ կառուցելու համար: Հին ցանցի փոխարինմամբ, նշանակալիորեն լավացել է թե՛ ջրի որակը, և թե՛ ճնշումը: Մինչ օրս համակարգում ոչ մի էական թերություն կամ վթար չի արձանագրվել: Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամի աջակցությամբ, մոտ ապագայում նախատեսվում է ավելացնել ջրամատակարարման ժամերը. տեղադրվելու է ջրի նոր, ավելի արդյունավետ պոմպ, որը շուրջօրյա ջրամատակարարման հնարավորություն կտա:

ԳՆԱՀԱՏԱՆՔ

«Ոսկե մեդալ» երիտասարդ մեղվաբույծին

Գործադիրն արդեն հաստատել է 2015-2017թթ. Եվրամիության փորձարկման ռեֆերենս մեթոդներով «Ձկան և մեղրի փորձաքննությունների ծրագիրը», որի իրականացումը մեր երկրում կնպաստի սննդամթերքի անվտանգության պատշաճ համակարգի ձևավորմանն ու այդ ճյուղերի զարգացմանը:

Տավուշի մարզում ևս բավականին կարևորում են այդ ճյուղերը և գնալով զբաղվողների թիվն ավելանում է: Ուրախալին այն է, որ հատկապես մեղվաբուծությամբ սկսել են զբաղվել նաև երիտասարդները: Նրանցից մեկն էլ՝ Անդրանիկ Ղալթախչյանն է, ով մեղվաբույծների մարզային խորհրդի նախագահն է, ունի 400 մեղվաընտանիք և մտադիր է տնտեսությունն ավելի ընդլայնել:

Անդրանիկի տնտեսությունը երբեք կորուստներ չի ունենում, որովհետև մեղուների խնամքի ու բուժման աշխատանքները կատարում է ժամանակին: Նա միշտ որոնումների մեջ է, աշխատում է ժամանակին ուսումնասիրել և իր տնտեսությունում կիրառել նորագույն տեխնոլոգիաները: Իր փորձառությունը սիրով է փոխանցում հարևան ֆերմերներին, տրամադրում համապատասխան խորհրդատվություն: Նա համագործակցում է նաև Տավուշի ԳԱՄԿ-ի հետ և սիրով մասնակցում վերջինիս կողմից կազմակերպված սեմինարներին:

Անդրանիկը զբաղվում է նաև ձկնորսությամբ և որսորդությամբ: Ազատ ժամանակ խորանում է մասնագիտական գրականության մեջ: Նա իր տնտեսությունը հիմնականում խնամում է Ծաղկավանի սարի ալպիական գոտում՝ հիմք ստեղծելով էկոլոգիապես մաքուր սննդամթերքի արտադրության համար: Անդրանիկը նաև բարեգործություններ է իրականացնում հայրենի Աչաջուր համայնքում՝ յուրաքանչյուր առաջին դասարանցու սննդակարգում ավելացնելով 1կգ մեղր: Նրա արդյունավետ աշխատանքը գնահատել է հանրապետության «Ֆերմերների ազգային միավորում» հասարակական կազմակերպությունը և օրերս նրան պարգևատրել «Ոսկե մեդալ»-ով: Տավուշի ԳԱՄԿ-ը շնորհավորում է երիտասարդ մեղվաբույծին այդ բարձր պարգևի համար և մաղթում նորանոր ձեռքբերումներ՝ ի շահ մարզում մեղվաբուծության զարգացման:

Տաթև Նազինյան
Տավուշի ԳԱՄԿ

ՀԵՏԱՔՐՔԻՐ Է....

ԱՐՔԱՅԱՆԱՐԻՆՋ

Արքայանարինջն իսկապես աստվածային ուտեստ է (ինչպես թարգմանվում է լատիներենից), քանի որ մի քանի անգամ ավել վիտամիններ և օգտակար նյութեր է պարունակում՝ քան խնձորը:

Օգտակար նյութեր

Արքայանարինջը հարուստ է՝ կալիումով, կալցիումով, մագնեզիումով, երկաթով, ֆոսֆորով, ածխաջրերով, կարոտինով, պեկտինով, պարունակում է մի շարք հակաօքսիդանտներ, օրգանական թթուներ, շաքարներ, վիտամիններ՝ A, C, P և այլն:

Օգտակար հատկությունները

Արքայանարնջի առավելությունները բազմազան են: Արդեն գույնից կարելի է նկատել, որ պարունակում է մեծ քանակությամբ կարոտին և նպաստում է մաշկի երիտասարդ մնալուն, նվազեցնում թոքերի քաղցկեղի հավանականությունը, և ոչ միայն թոքերի: Հրաշալի հակաօքսիդանտ է: Հասած պտուղները ոչ միայն մաքրում են թոքերը, այլ նաև կոկորդը (հատկապես՝ խոր աշնանն ու ձմռանը, երբ այս միրգը հասուն է, իսկ հազն էլ՝ անպակաս), ամբողջ օրգանիզմը, աղիները, երիկամները և ինչո՞ւ չէ նաև վատ մտքերը: Բարձրացնում է աշխատունակությունն ու դրական է անդրադառնում սրտանոթային համակարգի վրա: Արքայանարինջը ամենաշատ վիտամիններ պարունակող միրգն է: Այն մեծ թվով օգտակար բաղադրիչներ է պարունակում, նպաստում է մարսողական համակարգի և աղիների նորմալ կենսագործունեությանը:

Եթե ցանկանում եք նիհարել, օրական 4 արքայանարինջ օգտագործեք, այն հագեցնում է քաղցը՝ չզրկելով օրգանիզմն անհրաժեշտ օգտակար նյութերից: Նպաստում է էնդորֆին կոչվող հորմոնի արտադրությանը, ուժեղանում օրգանիզմի դիմադրողականությունը: Արքայանարինջը նպաստում է արյունատար անոթների պատերի ամրացմանը, կանխարգելում է աթերոսկլերոզի զարգացումը:

Վնասակար հատկություններ

Պետք է զգույշ լինեն հատկապես նրանք, ովքեր ունենում են հաճախակի փորկապություն կամ մարսողական այլ խնդիրներ և նրանք, ովքեր ստամոքսի խոցի կամ այլ աղիքային բարդ վիրահատություն են տարել: Չպետք է չարաշահեն նաև շաքարախտով հիվանդները, քանի որ մեծ քանակությամբ գլյուկոզա է պարունակում:Կերեք չափավոր, համադրեք այլ մրգերի հետ, որոնք փորը թուլացնող հատկություն ունեն:

Ուսումնական ձեռնարկ

«Բնական կերհանդակների արդյունավետ կառավարում»

Գյուղատնտեսության աջակցության «Կանաչ արահետ» հասարակական կազմակերպության կողմից լույս է տեսել «Բնական կերհանդակների արդյունավետ կառավարում» ուսումնական ձեռնարկը: Այն հանդիսանում է պաշտոնական փաստաթուղթ, որտեղ շարադրված է՝ ինչպես բնական կերհանդակների կառավարման, այնպես էլ՝ ուսուցման մեթոդոլոգիայի վերաբերյալ մասնագիտական տեղեկատվություն:

Ձեռնարկի մշակմանը մասնակցել են գյուղատնտեսական գիտությունների թեկնածուներ՝ Ն. Սարուխանյանը, Ռ. Սահակյանը, Վ. Թոռչյանը և կենսաբանական գիտությունների թեկնածու՝ Ա. Փահլևանյանը:

Ձեռնարկը նախատեսված է գյուղատնտեսության բնագավառի մասնագետների, ուսուցանողների, անասնապահությամբ ու կերարտադրությամբ զբաղվող ֆերմերների և ուսանողների համար:

Ուսուցողական ձեռնարկը հրատարակվում է «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության» ծրագրի շրջանակներում՝ Գլոբալ էկոլոգիական հիմնադրամի ֆինանսավորմամբ:

ԲՈՒԺԻՉ ՈՒՐՑԸ

«Սիսնապար». այսպես են անվանել ուրցը հայերը հին ժամանակներում: Այս բույսն աճում է հողին սերտաճած մեծ քարաբեկորների շուրջ: Ծաղկման շրջանում այն շրջակայքը լցնում է աննկարագրելի բույրով, որը դեպի իրեն է ձգում մեղուներին և այլ միջատների:

Միջին դարերում ուրցը բերվում է Կենտրոնական Եվրոպա: Քրիստոնեական մշակույթում ուրցը համարվում է Աստվածածին բույս: Հավատում էին, որ բույսի բուրումնավետ հոտը վանում է չար ուժերին: Հնագույն ժամանակներից ուրցն օգտագործել են խոհարարության մեջ. միջնադարի շատ գրքերում բերված են բաղադրատոմսեր, որոնց մեջ օգտագործվում է ուրցը: Այն մաս է կազմում լայն կիրառում ունեցող ժամանակակից համեմունքային խառնուրդների մեջ:

Ուրց գետնատարածը բնության մեջ հանդիպող բույս է, որը մինչև մեր օրերը պահպանել է իր նշանակությունը՝ որպես դեղաբույս: Այս փոքրիկ բազմամյա թփի բարձրությունը 12-15 սմ է: Բույսը մշակվել է Հռոմում, որը նրանք թրմել են քացախի մեջ: Այն 9-րդ դարից սկսել են մշակել շատ եվրոպական երկրներում, օգտագործել են թարմ տերևները՝ մսեղենի պատրաստման ժամանակ և աղցանների մեջ: Այս բույսն աճեցնում են մարգերի վրա, բազմանում է սերմերով: Ցողունը ուղղականգուն է, 30-45 սմ բարձրությամբ, տերևները նշտարաձև են, ծաղկում է հունիսից մինչև ձմռան սկիզբ: Ուրցի սովորական տեսակի հայրենիքը Միջերկրական ծովի հյուսիսային ափն է: Այն հնուց մշակվում է, ունի բազմաթիվ ենթատեսակներ: Որպես մշակաբույս՝ տարածված է գրեթե բոլոր եվրոպական երկրներում, ԱՄՆ-ում, Ղրիմում: Բույսը մեծ կիրառում ունի ավանդական բժշկության մեջ: Ուրց սովորականը 20-50 սմ բարձրության թուփ է, մշակվում է եթերային յուղի մեջ պարունակվող «տիմոլ» նյութի ստացման համար: Տերևների երկու կողմում գտնվող գեղձիկների մեջ պարունակվող եթերային յուղն առավել շատ է ծաղկման սկզբում: Տիմոլն ունի բուժիչ հատկություններ, բույսից ստացված յուղն ավելացնում են նաև ատամի մածուկի, օճառի մեջ, այն ունի լավ բուրմունք և մանրէասպան ազդեցություն:

Ուրց գետնատարածն ավելի երկար է ծաղկում, այն հրաշալի մեղրատու է (40-140 կգ՝ մեկ հա-ից), մթերումը կատարում են ծաղկման շրջանում: Համեմատվող տեսակները պարունակում են նաև՝ ֆլավոններ, թթուներ (ուրսոլի, օլեանոլի և այլն), դաբաղանյութեր, հանքային աղեր, կարոտին, ասկորբինաթթու, տանին: Ուրց գետնատարածից ստանում են «Պետրուսին» դեղամիջոցը, որը կա վաճառքում: Այն խորհուրդ է տրվում՝ որպես հազը փափկեցնող միջոց՝ վերին շնչառական ուղիների հիվանդությունների դեպքում: Բազմաթիվ հեղինակներ, ուրց սովորականի մասին գրելիս, գրեթե միշտ նշում են ուրց գետնատարածը: Կարելի է ենթադրել, որ բժիշկները և ժողովրդական բուժարարները նախընտրում են բնության մեջ աճող ուրց գետնատարածը: Այս բույսի ապագան Հայաստանում խիստ վտանգի տակ է: Ուրց գետնատարածը չի կարելի և պարզապես անիմաստ է պոկել հիմքից, հարկավոր է մկրատով կամ սուր դանակով կտրել ցողունի ծաղկակիր մասը:

Նշենք նաև, որ ուրցի բոլոր տեսակներն ունեն դիմադրողականությունը բարձրացնող հատկություն: Հետաքրքիր է նկատել, որ հին ժամանակներում մարդիկ իրենց սննդակարգում օգտագործել են ուրցի տարբեր տեսակները, խմել դրա թուրմը մեղրի հետ կամ տարվա ցուրտ եղանակին, ամիսը մեկ, շփել մարմինը ուրցի եփուկով:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«Ագրոլրատու» թերթ
1 տարվա գինը՝ 3960 դրամ
6 ամսվանը՝ 1980 դրամ
1 համարինը՝ 20 դրամ

«Ագրոլրատու»թերթի և «ԱԳՐՈԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ամսագրի

«Ագրոգիտություն» ամսագիր
1 տարվա գինը՝ 8100 դրամ
6 ամսվանը՝ 4050 դրամ
1 համարինը՝ 1350 դրամ

Բաժանորդագրությունն իրականացնում են՝
Գյուղատնտեսության աջակցության հանրապետական և մարզային կենտրոնները,
«Հայփոստ», «Հայմամուլ», «Պրես-Արտաշես» կազմակերպությունները:

ՍԿՍՎԵԼ Է 2015 Թ. ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Հայտնվում է հողօգտագործողներին, որ ՀՀ ԳՆ և ՓՄՁ ԶԱԿ-ի միջոցով, հանրապետություն է ներկրվել շուկայականից անհամեմատ ցածր գներով և խիստ պահանջարկ ունեցող բելառուսական արտադրության հետևյալ գյուղատնտեսական տեխնիկան՝ ճշգրիտ ցանքի սերմնացան ՍՊՁ-6ԼՏ, կարտոֆիլ ցանող սարք Լ-201, կարտոֆիլաքանդիչ ԿՏՆ-2Վ, փխրեցուցիչ Լ-131-7:

Ցանկացողները կարող են դիմել ՀՀ ԳՆ կամ Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ՝ հետևյալ հեռախոսահամարով՝ 54- 16-45

Ագրոլրատու
AGRONEWS
Հասցեն՝ Երեւան, Մամիկոնյանց 39ա, հեռ.՝ 23-21-02, ֆաքս՝ 23-03-80
E-mail: asrc@cln.am կայք http://www.asrc.am

ՀԻՄՆԱԴԻՐ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ
ՀՀ Գյուղատնտեսության նախարարություն
«Գյուղատնտեսության աջակցության հանրապետական կենտրոն» ՓԲԸ
Տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Ա. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
Համարի պատասխանատու՝ Ն. ՍԱՀԱԿՅԱՆ

Տպաքանակ՝ 1100
2 տպագրական մամուլ
գրանցման թիվ՝ 01 Մ 000226
դասիչ՝ 69105
պատվեր թիվ՝ 135
ստորագրված է տպագրության 04.12.2014 թ.
տպագրվում է ԳԱՀԿ տպարանում,
Երեւան, Մամիկոնյանց 39ա